ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. 1908—1996

Կյանքի 88-րդ տարում իր մահկանացուն կնքեց Հայաստանի Հանրապետության ազգային հերոս, Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր պրեզիդենտ, աշխարհի բազմաթիվ ակադեմիաների պատվավոր անդամ, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը:

Մեզնից հեռացավ մի մարդ, որը պատանեկան հասակից իր վրա հրավիրեց գիտական աշխարհի ուշադրությունը, հարստացավ գիտության նվաճումներով և հարստացրեց գիտությունը նոր նվաճումներով՝ համաշխարհային փառք բերելով հայ գիտությանը:

Վիկտոր Համազասպի Համբարձումյանը ծնվել է 1908 թ. սեպտեմբերի 18-ին: Դեռևս պատանի հասակում նա հրապարակային դասախոսություններ էր կարդում աստղաֆիզիկայի հարցերի վերաբերյալ՝ դառնալով լե-

գենդ գիտական աշխարհում: Քսան տարեկան հասակում նա արդեն ավարտել էր Լենինգրադի համալսարանը, որտեղ և հետագայում աշխատել է որպես պրոֆեսոր, այնտեղ ստեղծել է ԽՍՀՄ-ում առաջին աստղաֆիզիկայի ամբիոնը, որը ղեկավարել է երկար տարիներ՝ լինելով միաժամանակ համալսարանի պրոռեկտոր:

1943 թ. Երկրորդ համաշխարհային պատերազմի ծանր ժամանակաշրջանում Վիկտոր Համբարձումյանը եռանդուն գործունեություն է ծավալում Հայաստանում ստեղծելու գիտությունների ակադեմիա՝ դառնալով հայոց ակադեմիայի հիմնադիր անդամներից մեկը և առաջին փոխպրեզիդենտը: Մի քանի տարի անց՝ 39 տարեկան հասակում Վիկտոր Համբարձումյանը ընտրվում է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ և ղեկավարում ակադեմիան շուրջ կես դար: 1993 թ. Հայաստանի Հանրապետության նախագահի հատուկ հրամանագրով, նկատի ունենալով Վիկտոր Համբարձումյանի բացառիկ վաստակը համաշխարհային գիտության զարգացման և Հայաստանի Գիտությունների ակադեմիայի կազմավորման և ղեկավարման գործում, սահմանվում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր պրեզիդենտի կարգավիճակ: Ակադեմիայի անդամները միահամուռ ընտրում են Վիկտոր Համբարձումյանին ՀՀ ԳԱԱ-ի պատվավոր պրեզիդենտ:

Համաշխարհային և հայ գիտության պատմության մեջ նոր էջ են կազմում Վիկտոր Համբարձումյանի ներդրումները տեսական աստղաֆիզիկայի, աստղերի և միգամածությունների ֆիզիկայի, աստղային դինամիկայի, արտագալակտիկային աստղագիտության բնագավառում: Մի շարք սկզբունքներ, այդ թվում ինվարիանտության սկզբունքը, հակադարձ խնդիրների լուծման սկզբունքը և այլն, կրում են Վիկտոր Համբարձումյանի անունը: Նրա մշակած շատ գաղափարներ դուրս են եկել տեսական աստղաֆիզիկայի շրջանակներից, ստացել ընդհանուր մեթոդաբանական նշանակություն և խթան հանդիսացել գիտության այլ բնագավառների զարգացմանը ևս: Հատկանշական է, որ փիլիսոփայության համաշխարհային գիտաժողովներում Վիկտոր Համբարձումյանը ակտիվորեն մասնակցում է որպես գիտության, փիլիսոփայության կարկառուն ներկայացուցիչ:

Իր գիտական խոշոր վաստակի համար Վիկտոր Համբարձումյանը ընտրվել է աշխարհի շատ երկրների (ԱՄՆ, Անգլիա, Բելգիա, Ավստրիա, Ֆրանսիա, Գերմանիա, Կանադա, Ավստրալիա, Իտալիա, Հունաստան, Լեհաստան և այլն) գիտությունների ակադեմիաների և գիտական ընկերությունների պատվավոր անդամ, բազմաթիվ համալսարանների պատվավոր դոկտոր, ստացել է գիտությունների ակադեմիաների ոսկե մեդալներ:

Վիկտոր Համբարձումյանը գիտության խոշոր կազմակերպիչ էր: Նա ոչ միայն ղեկավարում էր Հայաստանի Գիտությունների ակադեմիան, այլև Բյուրականի աստղադիտարանը, Հայաստանի «Գիտելիք» ընկերությունը, Երևանի պետական համալսարանի աստղաֆիզիկայի ամբիոնը: Իր կազմակերպչական գործունեությամբ նա վաղուց դուրս է եկել հայրենիքի սահմաններից և ընդգրկվել գիտության ղեկավարման միջազգային ոլորտները: Երկու անգամ անընդմեջ (1968, 1972 թթ.) Վիկտոր Համբարձումյանը ընտրվել է Գիտական Միությունների Միջազգային Խորհրդի պրեզիդենտ:

1994 թ. հոկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով համաշխարհային նշանակության գիտական արժեքների ստեղծման, գիտության կազմակերպման բնագավառում մատուցած բացառիկ ծառայությունների և ազգանպաստ հասարակական գործունեության համար Վիկտոր Համբարձումյանին շնորհվել է Հայաստանի ազգային հերոսի կոչում՝ հանձնելով Հայրենիքի շքանշան:

Վիկտոր Համբարձումյանին երկու անգամ շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Նա բազմաթիվ շքանշանների, պետական մրցանակների դափնեկիր է: 1995 թ. հունիսին Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ. Ելցինի հրամանագրով Վիկտոր Համբարձումյանին շնորհվել է գիտության և տեխնիկայի բնագավառում պետական մրցանակ:

Համաշխարհային գիտական հասարակությունը, հայ ժողովուրդը այսօր մեծ կսկիծով հրաժեշտ են տալիս Մեծ Հային:

Վիկտոր Համբարձումյանի անունը հավերժորեն կշողշողա հայ և համաշխարհային գիտության երկնակամարում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ